ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

N Ե- 01/99

«08» Ապրիլի 2021թ

ՀՀ Լոռու մարզպետ
Պ-ն Ա. Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան

Ի պատասխան Ձեր 2020թվականի հունվարի 17-ի թիվ 01/107.3/00404-2020 գրության, Ձեզ ենք ներկայացնում տեղեկատվություն Ձորագետ համայնքի ավագանու 2021թվականի ապրիլի 15-ին հրավիրված հերթական նիստի վերաբերյալ:

Առդիր 9 թերթ:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Ձորագետ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Ձորագետ	Ավագանու հերթական նիստ	15.04.2021թ.	14:00	Ձորագետի համայնքապետարան (գ. Ձորագետ, 1փ. 41)

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2021թ. ապրիլի 15-ին՝ ժամը 14.00-ին Ձորագետի համայնքապետարանում
կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

ժամը՝ 14.00

1. Ձորագետ համայնքի ավագանու 2021թվականի ապրիլի 15-ի հերթական նիստի օրակարգ հաստատելու մասին

   զեկ. Ա. Գիրգորյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2021թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունելու մասին:

   զեկ. Ա. Գիրգորյան

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին:

   զեկ. Ա. Գիրգորյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---------- 2021 թվականի N - Ա

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է Հաստատել Ձորագետ համայնքի ավագանու 2021թվականի ապրիլի 15-ի հերթական նիստի օրակարգը:

1. Ձորագետ համայնքի ավագանու 2021թվականի ապրիլի 15-ի հերթական նիստի օրակարգ հաստատելու մասին: զեկ. Ա. Գիրգորյան
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի 2021թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունելու մասին: զեկ. Ա. Գիրգորյան
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին: զեկ. Ա. Գիրգորյան

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---------- 2021 թվականի N - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի38-րդ հոդվածի 1-ին մասի,1-ին կետով,«Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետով ՝ Ձորագետ համայնքի ավագանին

ո ր ո շ ում է.

Ընդունել ի գիտություն Ձորագետ համայնքի 2021թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման մասին Ձորագետ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Հավելված
Ձորագետ համայնքի ավագանու
«15» ապրիլի 2021թ. N -Ա որոշման

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Ձորագետ համայնքի 2021վականի բյուջեի առաջին եռամսյակը կատարվել է.
Ձորագետ համայնքի 2021թվականի բյուջեի առաջին եռամսյակի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 3710.6 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 2755.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 134.7%: Ընդ որում՝ Ձորագետ համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի վարչական մասով ծրագրված (ճշտված) 2755.0 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 3710.6հազար դրամ՝ ապահովելով 134.7% կատարողական:
Ձորագետ համայնքի 2021 թվականի բյուջեով առաջին եռամսյակի սեփական եկամուտները ծրագրվել են 1372.0 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 2327.6հազար դրամ կամ 169.7%: Սեփական եկամուտների փաստացի հավաքագրման ցուցանիշը ավել է գանձվել 2020 թվականի համապատասխան ցուցանիշից 1526.2 հազար դրամով:
Ձորագետ համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի միջոցների հաշվին իրականացվել է 1695.4 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 57.5%-ը: Հարկ է նշել, որ 2021 թվականի առաջին եռամսյակի ավարտին պարտքեր չեն թողնվել և փաստացի կատարողականի սահմաններում բոլոր ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ ֆինանսավորվել են:
Ստորև ներկայացվում է Ձորագետ համայնքի 2021 թվականի բյուջեի առաջին եռամսյակի փաստացի եկամուտների և ծախսերի առավել մանրամասն քանակական և համեմատական վերլուծությունը:
Հարկեր և տուրքեր.
- Գույքահարկի գծով առաջին եռամսյակի ընթացքում փաստացի կատարողական ցուցանիշները կազմել են 55.5 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 44.5 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 124.7%, որը 2020 թվականի փաստացի ցուցանիշից պակաս է 68.9 հազար դրամով:
- Հողի հարկի մասով առաջին եռամսյակի մուտքերը կազմել են 54.6 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 10.0 հազար դրամի նկատմամբ կամ կատարողականը կազմել է 546%, որը 2020 թվականի փաստացի ցուցանիշից ավել է գանձվել 29.6 հազար դրամով:
Տեղական տուրքերի գծով առաջին եռամսյակի փաստացի կատարման ցուցանիշները կազմել են 806.0 հազար դրամ՝ նախատեսված (ճշտված) 806.0 հազար դրամի դիմաց, կամ կատարողականը կազմել է 100%, որը 2020 թվականի փաստացի ցուցանիշից ավել է գանձվել 165.5 հազար դրամով:
Պաշտոնական դրամաշնորհներ.
Պաշտոնական դրամաշնորհների մասով առաջին եռամսյակի մուտքերը կազմել են 1383.0 հազար դրամ, ծրագրված (ճշտված) 1383.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարվել է 100%, որից ՀՀ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների և այլ դոտացիաների գծով փաստացի մուտքերը կազմել են 1383.0 հազար դրամ:
Այլ եկամուտներ.
Ձորագետ համայնքի 2021 թվականի բյուջեով առաջին եռամսյակի այլ եկամուտների գծով նախատեսված 1411.5 հազար դրամի դիմաց , փաստացի մուտքագրվել է 1411.5 հազար դրամ, որից.
- գույքի (այդ թվում հողերի) վարձակալությունից եկամուտների գծով փաստացի մուտքերը կազմել են 11,5 հազար դրամ,

- Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհների գծով փաստացի մուտքերը կազմել են 1400.0 հազար դրամ,

Ծախսեր

Ձորագետ համայնքի 2021 թվականի առաջին եռամսյակի բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 1695.4 հազար դրամի ծախսեր, ծրագրված (ճշտված) 2949.4 հազար դրամի դիմաց կամ ծրագրվածի 57.5%-ը:

Ձորագետ համայնքի 2021 թվականի առաջին եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի ունի հետևյալ պատկերը.

հազար դրամ

Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների խմբերի անվանումը	Տարեկան ճշտված բյուջեով նախատեսված	Փաստացի ծախս	Կատարման %
Աշխատանքի վարձատրություն	1000.0	800.0	80.0
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	250.0	250.0	100
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման	505.0	486.4	96.3
Վարչական սարքավորումներ	35.1	0	0
Այլ մեքենաներ և սարքավորումներ	159.3	159.0	99.8
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	1000.0	0	0
Ընդամենը	2949.4	1695.4	57.5

Ձորագետ համայքնի 2021 թվականի առաջի ն եռամսյակի բյուջեի ծախսերի կատարողականն ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների ունի հետևյալ պատկերը

հազար դրամ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի անվանումը	Տարեկան (ճշտված) բյուջեով նախատեսված	Փաստացի կատարված	Կատարման %
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	1949.4	1695.4	87.0
Բնակարանային շինարարություն	1000.0	0	0
Ընդամենը	2949.4	1695.4	57.5

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

---------- 2021 թվականի N - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Ձորագետ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Ձորագետ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

Հավելված 1
Ձորագետ համայնքի ավագանու
«15» Ապրիլի 2021թ. N -Ա որոշման

2021թվականի մարտի 01 -ից մարտի 31-ը ձեռք բերված հիմնական միջոցների ցանկ

Հ/Հ	Հիմնական միջեցի անվանումը	Ձեռքբերման տարեթիվը	Առկայությունը		Գումարը
			Փաստացի (քանակը)	հաշվապահական տվյալներով (քանակը)	
1	Եռակցման սարք	2021	1	1	106000
2	Հղկման սարք	2021	1	1	53000
Ընդամենը			2	2	159000

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏ Կ. ՇԵՐՄԱԶԱՆՅԱՆ